# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2019 թվականի N 238-Ա

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել Ծաղիկ Վարդգեսի Մարգարյանը (ծնված՝ 1962 թվականի հունիսի 11-ին) սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 21-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրի բնակելի կառուցապատման հողերից փոխելու բնակավայրի խառը կառուցապատման հողերի և հողամասում կառուցված թիվ 1 ավտոտնակի, թիվ 2 արհեստանոցի, թիվ 3 բնակելի տան գործառական նշանակությունը հասարակական՝ սրճարանի սահմանելու խնդրանքով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17042019-07-0067, տրված 2019 թվականի ապրիլի 17-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Ծաղիկ Վարդգեսի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 21-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող 1141,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի խառը կառուցապատման հողերի կատեգորիա:
2. Ծաղիկ Վարդգեսի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 21-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող 39,6 քառ.մետր մակերեսով թիվ 1 ավտոտնակի, 19,2 քառ.մետր մակերեսով թիվ 2 արհեստանոցի, 248,6 քառ.մետր մակերեսով թիվ 3 բնակելի տան գործառական նշանակությունը, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների սահմանել որպես հասարակական՝ սրճարան:
3. Պարտավորեցնել Ծաղիկ Վարդգեսի Մարգարյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:
4. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ДЖРВЕЖ
RA KOTAYK REGION JRVEZH MUNICIPALITY
*03546091*

2019 թ. մայիսի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 239-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Աշոտ Ավետիքի Սանթրոսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Աշոտ Ավետիքի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/17, 2-րդ թաղամասի թիվ 6/17/1 և 2-րդ թաղամասի թիվ 6/17/2 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 6/17:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 240-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի $156^{1}$-րդ հոդվածի երկրորդ մասի, $219^{1}$ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Սուրեն Աղասու Ավետիսյանը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի հին գերեզմանատան տարածքում, առանց վարչական ղեկավարին նախապես տեղեկացնելու կատարել է հանգուցյալին հուղարկավորելու համար անհրաժեշտ փոսի քանդում՝ խախտելով հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերն ու կանոնները, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սուրեն Աղասու Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 20 000 (քսան հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Սուրեն Աղասու Ավետիսյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Պարտավորեցնել Սուրեն Աղասու Ավետիսյանին՝ Ձորաղբյուր գյուղի գերեզմանատներում գործունեություն չծավալել առանց վարչական ղեկավարի հետ նախապես համաձայնեցնելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 241-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի $156^1$-րդ հոդվածի երկրորդ մասի, $219^1$ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Գարուն Երվանդի Սահակյանը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի հին գերեզմանատան տարածքում, առանց վարչական ղեկավարին նախապես տեղեկացնելու կատարել է հանգուցյալին հուղարկավորելու համար անհրաժեշտ փոսի քանդում՝ խախտելով հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերն ու կանոնները, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գարուն Երվանդի Սահակյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 20 000 (քսան հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Գարուն Երվանդի Սահակյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Պարտավորեցնել Գարուն Երվանդի Սահակյանին՝ Ձորաղբյուր գյուղի գերեզմանատներում գործունեություն չծավալել առանց վարչական ղեկավարի հետ նախապես համաձայնեցնելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 242-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 156[1]-րդ հոդվածի երկրորդ մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Վարուժան Արամի Մարգարյանը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի հին գերեզմանատան տարածքում, առանց վարչական ղեկավարին նախապես տեղեկացնելու կատարել է հանգուցյալին հուղարկավորելու համար անհրաժեշտ փոսի քանդում՝ խախտելով հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերն ու կանոնները, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վարուժան Արամի Մարգարյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 20 000 (քսան հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Վարուժան Արամի Մարգարյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Պարտավորեցնել Վարուժան Արամի Մարգարյանին՝ Ձորաղբյուր գյուղի գերեզմանատներում գործունեություն չծավալել առանց վարչական ղեկավարի հետ նախապես համաձայնեցնելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 243-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Արտաշես Էդիկի Տոռոզյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 5-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 167-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 1-ին կետում «նկուղային և մանսարդային հարկերով» բառերը փոխարինել «նկուղային հարկով» և «օժանդակ շինության» բառերից հետո լրացնել «, ավտոտնակի» բառերով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2019 թվականի N 244-Ա

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 58 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Վրեժ Դավթի Դավթյանը (ծնված՝ 1978 թվականի հոկտեմբերի 30-ին)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 58 հասցեում գտնվող գույքի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական համար 25052017-07-0010, տրված 2017 թվականի մայիսի 25-ին) նպատակային նշանակությունը փոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի, 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վրեժ Դավթի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 58 հասցեի՝ 970,0 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:
2. Քաղաքացի Վրեժ Դավթի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 58 հասցեում գտնվող 219,1 քառ.մետր մակերեսով լաբորատոր շենքի նպատակային նշանակությունը փոխել բնակելի տան:
3. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին՝ սույն որոշման առաջին և երկրորդ կետերում նշված գույքի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2019 թվականի N 245-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հայկ Բենիկի Շահումյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 4-րդ թաղամասի թիվ 116 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան վերակառուցման և ցանկապատի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2019 թվականի N 246-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մարիաննա Գագիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան վերակառուցման, կցակառույցի, հանգստի սրահի և ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«15» մայիսի 2019 թվականի N 247-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սարգիս Յուրիկի Համայակյանին տալ մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին զանգվածի 9-րդ թաղամասի թիվ 8 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Սարգիս Յուրիկի Համայակյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մայիսի 2019 թվականի N 248-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ելենա Արծրունու Գրիգորյանի (ծնված՝ 1975 թվականի հունվարի 1-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 28 տեղամասի թիվ 47 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2812192 վկայական, տրված 2011 թվականի սեպտեմբերի 27–ին, «Կադաստրային սերվիս կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մայիսի 3-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):
Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Կադաստրային սերվիս կենտրոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ելենա Արծրունու Գրիգորյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 28 տեղամասի թիվ 47 հասցեի այգեգործական հողակտորում 2012 թվականին ինքնակամ կառուցել է այգետնակ 1-ին հարկ՝ 18,0 քառ.մետր, այգետնակ կիսանկուղ՝ 7,7 քառ.մետր, այգետնակ ծածկոց՝ 11,9 քառ.մետր, ծածկոց՝ 3,5 քառ.մետր և աստիճանավանդակ՝ 5,6 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ելենա Արծրունու Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 28 տեղամասի թիվ 47 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ելենա Արծրունու Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 28 տեղամասի թիվ 47 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված այգետնակ 1-ին հարկը՝ 18,0 քառ.մետր, այգետնակ կիսանկուղը՝ 7,7 քառ.մետր, այգետնակ ծածկոցը՝ 11,9 քառ.մետր, ծածկոցը՝ 3,5 քառ.մետր և աստիճանավանդակը՝ 5,6 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 111 956 (մեկ հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ        Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«15» մայիսի 2019 թվականի N 249-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանի (ծնված՝ 1973 թվականի նոյեմբերի 22-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2 այգետարածքի 28 թաղամասի թիվ 46 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2811850 վկայական, տրված 2011 թվականի սեպտեմբերի 19–ին, «Կադաստրային սերվիս կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մայիսի 3-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Կադաստրային սերվիս կենտրոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2 այգետարածքի 28 թաղամասի թիվ 46 այգեգործական հողակտորում 2012 թվականին ինքնակամ կառուցել է աստիճանավանդակ՝ 5,2 քառ.մետր, ծածկոց՝ 67,3 քառ.մետր և պարիսպ՝ 4,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանը սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2 այգետարածքի 28 թաղամասի թիվ 46 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***.

1.Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2 այգետարածքի 28 թաղամասի թիվ 46 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված աստիճանավանդակը՝ 5,2 քառ.մետր, ծածկոցը՝ 67,3 քառ.մետր և պարիսպը՝ 4,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 194 740 (մեկ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2019 թվականի N 250-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Հովհաննես Դերենիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0070 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23042019-07-0066, տրված 2019 թվականի ապրիլի 23-ին):

2. Հովհաննես Դերենիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0332-0070 կադաստրային համարի 500,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 2/28:

3. Առաջարկել Հովհաննես Դերենիկի Գրիգորյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 242 500 (երկու միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15

գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«15» մայիսի 2019 թվականի N 251-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Իվետտա Հրանտի Ներսեսյանի (ծնված՝ 1940 թվականին մայիսի 3-ին) և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանի (ծնված՝ 1962 թվականին հուլիսի 13-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել ճանաչել իրենց սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 3 և 3ա թաղամասի թիվ 11 հասցեի՝ իրենց կողմից փաստացի օգտագործվող 614,0 քառ.մետր մակերեսով այգեգործական հողակտորի նկատմամբ և օրինականացնել նշված հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, վավերացված 2010 թվականի մայիսի 18-ին, «ՍՎ Չափագրում» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մարտի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՍՎ Չափագրում» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Իվետտա Հրանտի Ներսեսյանը և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 3 և 3ա թաղամասի թիվ 11 հասցեի այգեգործական հողամասում 1989-2005 թվականներին ինքնակամ կառուցել են այգետնակ նկուղ՝ 61,7 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկ՝ 51,1 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկ ծածկարան՝ 51,0 քառ.մետր, աստիճան՝ 4,08 քառ.մետր, պարիսպ՝ 14,9 քառ.մետր արտաքին մակերեսներով և նրանց կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 614,0 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 500,0 քառ.մետրի փոխարեն:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 22.1 կետերի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իվետտա Հրանտի Ներսեսյանին և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով այն, որ Իվետտա Հրանտի Ներսեսյանին և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 3 և 3ա թաղամասի թիվ 11 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ճանաչել Իվետտա Հրանտի Ներսեսյանի և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 3 և 3ա թաղամասի թիվ 11 հասցեի՝ փաստացի օգտագործվող 614,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ, որը նրանց կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Իվետտա Հրանտի Ներսեսյանին և Տիգրան Ալեքսանդրի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի թիվ 3 և 3ա թաղամասի թիվ 11 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված այգետնակ նկուղը՝ 61,7 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկը՝ 51,1 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկ ծածկարանը՝ 51,0 քառ.մետր, աստիճանը՝ 4,08 քառ.մետր, պարիսպը՝ 14,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 132 600 (մեկ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15

գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2019 թվականի N 252-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Սարո Մայիսի Գրիգորյանի դիմումը՝ հողամասից կամովին հրաժարվելու մասին, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սարո Մայիսի Գրիգորյանի կողմից կամովին հրաժարված 07-057-0323-0058 կադաստրային համարի 7,2 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ